«ՀԱՅՍԵՐՏ» ՍՊԸ HAYCERT «HAYCERT» LLC

ք. Երևան, Նորք Մարաշ, Սարգիս Բաղդասարյան փող. տուն 14, Հեռ. +374-94107701 E-mail: haycert@haycert.am
Sargis Baghdasaryan str., bld. 14, Nork Marash, Yerevan, Armenia Tel. +374-94107701

Տեղեկատվություն սերտիֆիկացման ավարտման, կրճատման, կասեցման կամ դադարեցման վերաբերյալ

Համապատասխանության հսկողության իրականացման արդյունքում բացահայտված սերտիֆիկացման պահանջների անհապատասխանությունների դեպքում ՍՄ-ն որոշում է ընդունում՝ համապատասխան միջոցառումների նախաձեռնման վերաբերյալ, այդ թվում.

- Սերտիֆիկացման գործողության պահպանում ՍՄ-ի կողմից սահմանված պայմանների համաձայն (օրինակ՝ ավելի խիստ համապատասխանության հսկողություն),
- Սերտիֆիկացման ոլորտի կրճատում՝ ոլորտից հանելով չհամապատասխանող արտադրատեսակները,
- Սերտիֆիկացման ժամանակավոր կասեցում՝ մինչև հայտատուի կողմից ուղղիչ գործողությունների իրականացումը,
- սերտիֆիկացման դադարեցումը:

Եթե սերտիֆիկացումն ավարտվում (հայտատուի պահանջով), կասեցվում կամ դադարեցվում է, ինպես նաև սերտիֆիկացման ոլորտի կրճատման դեպքում, ՍՄ-ն ձեռնարկում է սերտիֆիկացման սխեմայով սահմանված գործողություններ և անհրաժեշտ փոփոխություններ է կատարում.

- Սերտիֆիկացման պաշտոնական փաստաթղթերում,
- Հանրամատչելի տեղեկատվության մեջ,
- Սերտիֆիկացման նշանների օգտագործման թույլտվությունների մեջ,
- Այլ ուղեկից փաստաթղթերի մեջ,

ուղղված արտադրանքի սերտիֆիկացման մասին վկայող ցանկացած ցուցումների վերացմանը, ինչպես նաև հայտատուին սերտիֆիկացման ոլորտի կրճատման վերաբերյալ իրազեկմանը և փաստաթղթերում հանրամատչելի տեղեկատվության հստակ ձևակերպմանը:

Սերտիֆիկացման գործողության ժամկետի կասեցման դեպքում, արտադրանքի սերտիֆիկացման մարմնի ղեկավարը տեղեկացնում է հայտատուին հետևյալի մասին.

- Ըստ սերտիֆիկացման սխեմայի արտադրանքի սերտիֆիկացման կանգնեցման, կասեցման և վերականգնման համար անհրաժեշտ գործողությունների մասին,
- Սերտիֆիկացման սխեմայի համաձայն այլ գործողությունների մասին:

Եթե սերտիֆիկացումը վերականգնվում է կասեցումից հետո, ՍՄ-ն ձեռնարկում է անհրաժեշտ փոփոխություններ սերտիֆիկացման պաշտոնական փաստաթղթերում, հանրամատչելի տեղեկատվության և սերտիֆիկացման նշանների օգտագործման թույլտվությունների մեջ՝ նպատակադրվելով ապահովել արտադրանքի սերտիֆիկացման վերականգման վերաբերյալ անհրաժեշտ ցուցումները և տեղեկությունները: Այն դեպքում, երբ սերտիֆիկացման ոլորտի կրճատման որոշումը հանդիսանում է հայտատուի սերտիֆիկացման գործողության վերականգնման պայման, ՍՄ-ն նախաձեռնում է անհրաժեշտ փոփոխություններ սերտիֆիկացման պաշտոնական փաստաթղթերում, հանրամատչելի տեղեկատվության և սերտիֆիկացման նշանների օգտագործման թույլտվությունների մեջ՝ նպատակադրվելով տեղեկացնել հայտատուին սերտիֆիկացման ոլորտի կրճատման մասին և ձևակերպել սերտիֆիկացման փաստաթղթերում ու հանրամատչելի տեղեկատվություններում համապատասխան փոփոխությունները:

«ՀԱՅՍԵՐՏ» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Մարտիրոսյան

30.06.2025թ

«ՀԱՅՍԵՐՏ» ՍՊԸ
"АЙСЕРТ"
"HAYCERT"
00526589